ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____ Ս.Փիրումյան

<< 15 >> սեպտեմբեր 2022-23 ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Տավուշի մարզի Աչաջրի Հ.Թամրազյանի

անվան միջն.դպրոցի 11-րդ Ա

դասարանի դասղեկ՝ Ա.Սարուխանյան

2022-2023 ուստարի

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

3.3 Ռազմա -հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրե- նասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

3.7 Դպրոց -ընտանիք կապը

Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակու- թյան մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

11-րդ Ա դասարանի դասղեկի ժամի տարեկան թեմատիկ պլան

Տավուշի մարզի Աչաջրի միջն. Դպրոց

Դասղեկ՝ Ա Սարուխանյան

2022-2023թթ ուստարի

Դասի համարը	Դասի բովանդակությունը
1	Մասնագիտության ընտրություն 2022-2023թ ուստարվա անելիքների քննարկում:
2	2 տարի ևս և կուղևորվենք կյանքի մի ուրիշ աշխարհ:
3	Մասնագիտություններ, որ հետաքրքրում են ինձ՝ անկախ Հայաստանի քաղաքացուս :
4	Ինչով է պայմանավորված մասնագիտության կարևորությունը:
5	Ինչ դառնալ կյանքում... Ամենամեծ պաշտոնը երկրի վրա:
6	Հռչակավոր Չապլինի նամակը՝ ուղղված աղջկան: Թեմային համահունչ այլ փաստերի ներկայացում:
7	Արդյո՞ք բարձրագույն հաստատություն ավարտելը միշտ է բավարար կրթված լինելու համար:
8	Հայրենիքիս հետ Ով չի սիրում իր երկիրը,ոչինչ սիրել չի կարող:
9	<<Հայաստան>> ասելիս աչքիս առաջ են գալիս...
10	Արտագաղթը այսօրվա ամենամեծ չարիքն է ազգիս համար: Եկեք խոստովանենք,որ օտարության մեջ արևը կարծես չի ջերմացնում:
11	Ընկան,որ ապրենք.. ...Եվ նրանց փառքը երբեք չի մեռնում, Ովքեր հայրենիքի համար են ընկնում:
12	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի:
13	Ի՞նչ է պետք հզոր հայրենիք ստեղծելու համար:
14	Ձեռքդ տու'ր ,միասին լուծենք բոլոր խնդիրները:

15	Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք:
16	Մարդկային փոխհարաբերություններ Եթե չես ուզում տառապել՝ մի' նախանձիր:
17	Կյանքի սանդուղքով վեր բարձրանալիս բարևի'ր բոլորին. Նրանց հանդիպելու ես նաև իջնելիս...
18	Ի՞նչն էխանգարում ինձ՝ քեզ հասկանալ:
19	Հպարտությու՞ն, թե՞ ամոթանք: Որոշ մոլորությունների մասին:
20	Խիղճ...Ամենաանաչառ և խիստ դատավորը բոլորիս համար:
21	Երբ մեղավոր ես,<<ներողությունը>> բարձրացնում է անձդ,ոչ թե նվաստացնում:
22	Ե'կ հասկանանք իրար: Ինքնատիրապետման անհրաժեշտությունը:
23	Երախտիքի խոս՞ք ունես՝ ասա հենց հիմա,ի՞նչ իմանաս՝ գուցե վաղն արդեն ուշ լինի...
24	Ներելը ուժեղին և մեծ հոգուն է բնորոշ:
25	Ամենասարսափելին նույն սխալը կրկնելն է և համառորեն այն չգիտակցելը:
26	Ի՞նչ է սերն ու նվիրվածությունը:
27	Սիրված լինելը երջանկություն է, սիրելը՝ է'լ ավելի մեծ երջանկություն է:
28	Առաքինությունը բոլորովին էլ կիրք չունենալը չէ...
29	Ի՞նչ կլինի,եթե բոլորը դադարեն սիրել:
30	Սիրում եմ,ուրեմն գոյություն ունեմ, գոյություն ունեմ՝ քանզի սիրում եմ:
31	Սերը վեհացնում է մարդուն:
32	Երբեմն ներողամտությունը խստությունից սաստիկ է ազդում:
33	Մի' ձգտիր շահի, այն անկեղծության թշնամին է:
34	Լա'վ իմացիր՝ փոքր աղբյուրից մարդ հանգիստ է ջուր խմում: <<Բաց դաս>>-ով կատարել թեմայի ամփոփում